

գին աղմուկ բարձրացաւ, և ետեւեալ կարծիքը յայտնեցի «Բազմավէպ»ի մէջ. «Քանի որ (նորագրեալ Մարիբասը) ձորեանացու է ետ նմանութիւնս ներ շուշի, ինչո՞ւ պնդել թէ այն գրութիւնը Մարիբասս «Կատինայի» կը պատկանի, Ուրիշ Մարիբասներ շատ ։» (Բազմ. 1897, եր. 87.)

Կ. Յ. Բ.



Կ Ի Ն Ե Ր Ը Տ Ա Ճ Կ Ա Ս Տ Ա Ն Ի Մ Է Ջ

Թրքուհիներու կեանքի պայմաններու մասին մեր մէջ շատ զէշ գաղափար մը կազմուած է ։ Կը կարծուի թէ սիրային նախանձի եւ բարբարոսութեան գոհեր ըլլան, որոնք՝ դատապարտուած ախար շէնքերու մէջ փակուելու՝ գաւազանով եւ խարազանով զինուած զարհուրելի խափշիկներու հսկողութեան ներքեւ կը գտնուին իսկ երբեմն ալ՝ ընդհակառակը՝ կ'երեւակայինք հարէմի հեշտանքները. — հիասքանչ կիներ, որոնք կը միանան միակ անձի մը երջանկութեանը համար ։ Սակայն կրօնքը եւ սովորութիւնները տարօրինակ կերպով կը շափաւորեն այս իտէականը, որ կը հրապուրէ այնքան եւրոպացիներ ։ Ամէն անոնք որ արեւելեան կեանքի մասին այս նախապաշարեալ գաղափարները ունէին, շուտով յուսախաբ եղան. այն եւրոպացիներէ շատերը որոնք տաննով փաշայի մը ծառայութեան մտնելէ յետոյ, շահի տեսակէտէ կամ հաճոյքէ մղուած՝ ընդունած էին իսլամութիւնը, շուտով վերագարձան եթէ ոչ եկեղեցիին գոգը, այլ գոնէ քրիստոնէական միակընութեան հրապուրանքներուն ։

Ինչ որ ալ ըլլայ, եթէ մտածենք թրքուհիին թշուառ կամ երջանիկ վիճակին վրայ՝ ինքզինքնիս կը խաբենք, քանի որ կը տարակուսինք թէ գտնուի ուրիշ երկիր մը ուր թրքուհիին նման կան անգործ, հետաքրքիր, անհոգ եւ հաճոյքի ու զբօսանքի ծաբաւի կիներ, որոնք պտոյտի ելնեն, զուարճութեանց ետեւէ վազեն, յագեցնեն իրենց քրմահաճոյքը թէ՛ հարէմին մէջ եւ թէ՛ հարէմէն գուրուի՛յս տեսակէտով է որ կը կարծենք թէ շատ եւրոպացի կիներ այս ամէն առաւելութիւնները եւ ասոնց դիմաց նոյն իսկ անպատեհութիւնները ի նկատի առնելով՝ պիտի չվարանէին փոխանակելու իրենց վիճակը եւ համեմատական աղատութիւնը թրքուհիին այն ենթադրեալ գերութեան հետ, եթէ աւելի լաւ ճանչնային ։ Բնական է որ ասիկա միայն նիւթականին համար է ։ Գալով բարոյականին եւ մտաւորականին, անոր բոլորովին հակադաս է ։ Եւ եթէ այդ կողմը դառնանք՝ հարկ է ընդունիլ թէ արուելքի կիներ կարեկցութեան արժանի է ։

Նաւ համադուինք թէ ամբողջ Տաճկաստանի միջ ամուսնացած կին մը ունի այն ամէն առաւելութիւնները ինչպէս մեր մէջ, եւ թէ կըրնայ արգիլել ամուսինին տոնել երկրորդ կին մը, եթէ իր ամուսնացածն պայմանագրին մէջ կը շօշաիւ նոյն կէտը ։ Չկարծենք նաեւ, թէ այդ գեղեցիկ կիները կը զիջանին երգելու կամ պարելու, զուարճացնելու համար իրենց տէրը ։ այլ ընդհակառակը այդ բաները նկատուած են ստորնացուցիչ արարքներ, պատուաւոր կնոջ մը համար ։ այսու հանդերձ ուզողը կրնայ իր հարէմէն ներս առնել պարուհիներ, եւ երգչուհիներ, զբօսնելու եւ զբօսցնելու համար իր կիները ։ նոյնպէս հարկ է որ ամուսին մը զգուշանայ շատ զբաղելէ իր կնոջը կամ սիրուհիներուն տուած գերուհիներուն հետ, քանի որ այդ գերուհիները այլ եւս անոնց տնայական սեպակահանութիւնը կը նկատուին, եւ եթէ կը փափաքի վանոնք իրեն համար զործածել, խելացիութիւն կը համարի զտեսել կնոջը այդ գերուհիները ուրիշ տան մը մէջ ։ ասով առանց ո՛րեւէ արգիլքի կրնայ բազմացնել իր սերունդը ։

Տաճկական տուն մը երկու մասերէ կը բաղկանայ ։ այր-մարդերու եւ կիներու բաժինը ։ Եթէ մէկին մէջ տէր մը կայ, միւսին մէջ ալ կայ սիրուհի մը ։ Ամուսինը եւ մերձաւոր սգոականները յաղաքավարօրէն կ'այցելեն ։ եւ որովհետեւ ամուսինը իր կիներուն հետ չի ճաշեր, իրեն համար ժամանցի զխաւոր միջոցներն են դանդաղօրէն ծխել նարկիլէն, եւ օշարակ կամ սուրճ խմել ։ Սովորութիւն է հարէմ մտնելէն առաջ իմաց տալը ։ մանաւանդ եթէ դուռին մօտ հողաթափ տեսնուի՝ կը զգուշանան մտնելէ, որովհետեւ ասիկա նշան մ'է թէ իր կիները բարեկամուհիներու այցելութիւնը ընդունած են ։ բարեկամուհիներ որոնք յաճախ կը մնան մէկ երկու օր ։

Քաղաքակրթեալ երկիրներու մէջ, ուր բացարձակ անդործութիւնը ամբողջ նկատուած է, թուրքիայի մէջ սովորական բան մ'է ։ այս տեսակէտով ամէն կիներն ալ նոյնն են ։ կրթութիւնը՝ որ մարդուս միտքն ու արուեստներու ճաշակը կը զարգացնէ, կամ ուրիշ մը նրկատմամբ սէրը՝ որ կը մղէ անոր մասին խորհելու, ասոնց բոլորն ալ դրեթէ ամբողջովին կը պակսին Տաճկաստանի կիներու կեանքին մէջ ։ Ամէն վիճակի պատկանող կիներ՝ յաւիտենական անգործութեան դատապարտուած են ։ Ձանձրոյթը, դատարկութենէ ծնած այդ խորշիկ հրէշը, ահա՛ այն մեծ ահաւոր թշնամին որին զէմ հարկ է որ անդադար կտուին ։ Եւ՝ ինչպէս որ կը տեսնենք, իրենց ամբողջ մտածումը եւ ջանքերը զէպ ի այդ կը ձգտին ։

Նախ՝ հարուստ հարէմներու մէջ՝ ուր ամէն կին իր ճոխօրէն կահաւորուած յարկն ունի, կիները զիրար հրաւիրելով կը հաւաքուին, հոն իրենց ներքին զբօսանքներն են մեծ եւ պղտիկ խաղեր, խօսակցութիւններ եւ վէպիկներ, նոյնպէս նաեւ նուագարաններով երաժշտութիւն, խմբովին երգեր, պար եւ խեղկատակ ներկայացումներ, կան

նաեւ պարտէզներու մէջ եւ քարատափներու վրայ պտոյտներ, կախօր-
 բանէ յառաջ եկած յուզումներ եւ անոր մեղմ երերումը, ախորժահամ
 նախահաշեր եւ անոնց յաջորդող այն զուարճութիւնը որ կը զգան,
 ընելով երբեմն նոյն իսկ անզուժ կատակներ այն խափշիկներուն հետ՝
 որոնց վայրենի ձայները, երեսի ծամածառութիւնը եւ տձեւ ու ծաղ-
 րելի շարժուածքնին զուարթութեան քահ-քահներ կը յարուցանեն :
 Պատով դուրս ելնելու եւ այցելութիւններ տալու ազատութեան, կա-
 րելի չէ մերժել այն կնոջ՝ որ բնականէն ազատ ծնած է : Ամուսինը
 մինչեւ մէկ աստիճան իրաւունք ունի, այն է՝ գերիներով շրջապատել .
 սակայն այս ալ կարեւորութենէ զուրկ նախազգուշութիւն մ'է, քանի
 որ թրջուհին կրնայ զանոնք սիրաշահիլ, եւ կամ դուրս ելնել ծպտեալ,
 կա՛մ բաղնիքէն եւ կա՛մ իր մէկ բարեկամուհիին տունէն : Դիմաքօղը
 եւ զգեստներու նոյնութիւնը՝ բաղդատամբ եւրոպացիներուն՝ աւելի
 դիւրութեան պիտի ընծայէր անոնց, եթէ երբեք մտադէրն կանացի
 մեքենայութիւններ լարել :

Իրիկունները սրճարաններուն մէջ պատմուած զուարթ վկայերը
 յաճախ այնպիսի սիրահարներու շուրջը կը դառնան, որոնք կնոջ կեր-
 պարանքով ծպտեալ կը մտնեն հարէմներէ ներս : Սիրաւի անոնց համար
 ասիէ զուարճալի բան մ'ալ չի կրնար գտնուիլ . եւ սակայն այդ պատ-
 մութիւնները քուելի արաքական երեւակայութեան անբարոյութիւններ
 են քան տանկական :

Դուրսի հաճոյքները թրջուհիին համար ամենէն աւելի հրապու-
 րիչներն են . եւ կինը կը փնտռէ զանոնք ու կը վայելէ բուրբուրի
 սարբեր եղանակով քան թէ տանը մէջ, քանի որ յագուրդ կուտայ իր
 հետաքրքրութեան եւ նմանը չտեսնուած ունայնասիրութեան . եւ որով-
 հետեւ ոչինչ կրնայ կաշկանդել իր գործելու ազատութիւնը, ուստի
 ամէն անգամ որ առիթը ներկայանայ՝ ձեռքէ չի փախցներ : Թրջուհին
 կ'ախորժի ընկերակցութեամբ դուրս ելնելէ . եւ ասո՛ր համար է որ
 միշտ տասնեակ կամ երկուտասնեակ կը սպասին ամէն կողմ, շուկաները,
 որոնց կամարները կը թնդացնեն իրենց խօսակցութեամբ եւ բարձ-
 րաձայն ծիծաղներով : Ատոնց պտոյտները՝ մասնաւոր հետաքրքրութեան
 արժանի դաշտահանդէսներ կը կազմեն : Լամարթին հււստարմա-
 բար եւ հիանալի կերպով նկարագրած է այն մարդագետիները որոնց
 վրայ ճերմակ եւզամախով եւ գոյնզգոյն քօղերով արեւելցի կիներ եւ
 այլազան զգեստներով մար, եր խոււմբ խոււմբ տարողնած են . նանը-
 կարած է ամբողջ բանաստեղծութիւնը եւ դուրս ցայտող հաճոյքները .
 դիւխական անհաւասար տեւարաններ են անո՛ք, որոնց այնքան ցեղե-
 ցիկ մէկ նկարագիրը կուտայ մեծ գրագէտն ու բանաստեղծը իր ճան-
 քարդարիմն յլէսէս երկին մէջ :

Պարգմ. Հ Ա. Ա. Տիւն